ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՆՎԻՐՅԱԼԸ

Գիտնական հոգևորականներ կան, ովքեր իրենց նվիրումով և գործունեությամբ դառնում են հարազատ միաբանության ժամանակի գիտական-իմացական կյանքի խորհրդանիշը և իրենց երկրային կյանքի ավարտով փակում միաբանության պատմության որոշակի ժամանակահատվածն ընդգրկող մեկ կարևոր էջը:

Վենետիկի Մխիթարյան միաբանության համար եթե բոլոր ժամանակներում անանց խորհրդանիշներ դարձան Մխիթար Սեբաստացին և Ղևոնդ Ալիշանը, ապա մեր օրերում միաբանության գիտական գործունեությունը համակարգող և վերջերս կյանքից այնքան անժամանակ հեռացած Սահակ Ճեմճեմյանը, Վիեննայի Մխիթարյանների համար այսպիսի մեկ կարևոր էջ փակվեց հայագիտության վերջին կենդանի հսկաներից Ներսես Ակինյանի մահվամբ, իսկ Երուսաղեմի հայոց միաբանության համար նման կորուստ դարձավ ավագագույն հայ եպիսկոպոս երջանկահիշատակ Նորայր արք. Պողարյանի մահը:

Նորայր արք. Պողարյանը ծնվել է 1904 թ. Այնթապում: Հայոց Մեծ Եղեռնից հետո ապաստանել է Սիրիայում, այնուհետև ուսանել Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի վարժարանում՝ աշակերտելով երջանկահիշատակ Եղիշե Պատրիարք Դուրյանին: 1928 թ. հուլիսի 22-ին՝ Պայծառակերպության տոնի օրը, ձեռնադրվելով կուսակրոն քահանա, այնուհետև մեկնում է Լոնդոն, ուր երկու տարի սովորելուց հետո, նորից վերադառնում Երուսաղեմ: Բացառությամբ 1935-40 թթ. ժամանակահատվածի, որի ընթացքում ղեկավարում է Անթիլիասի Դպրեվանքը, մնացյալ ողջ կյանքը անցկացնում է Երուսաղեմում ու Ալիշանի նման նվիրվում հայ ձեռագրային աշխարհին՝ 1949 թվականից մինչև 1990 թ. լինելով Ս. Հակոբյանց վանքի Ձեռագրատան պատասխանատուն:

Ձեռագրերից նա հանեց և հրատարակեց հայ միջնադարյան մատենագրության մի շարք գոհարներ, որոնք մինչ այդ վրիպել էին հետազոտողների ուշադրությունից: Բնագրագիտությունից հետո նրա նախասիրած երկրորդ բնագավառը մատենագիտությունն էր: Ս. Հակոբյանց վանքի ձեռագրային հարուստ նյութի, հայկական ձեռագրերի մյուս պահոցների ցուցակների հիման վրա տարիների տևական տքնաջան աշխատանքով Նորայր Սրբազանը կազմեց և առանձին գրքերով հրատարակեց միջնադարյան հայ գրողների և ծաղկողների ու դրիչների գործերի մատենագիտությունը: Հայ ձեռագրային նյութի հարուստ իմացությունը հոգևորական գիտնականին հնարավորություն ընձեռեց հայոց միջնադարի տարբեր ժամանակահատվածներին վերաբերող մի շարք կարևոր պատմա-բանասիրական ճշգրտումներ կատարել:

Նորայր Սրբազանի բոլոր աշխատանքների պսակը, սակայն, դարձավ Գյուլբենկյան հաստատության հովանավորությամբ հրատարակված 11 հատորանոց «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» 4.000 ձեռագրերի լիակատար նկարագրությունն ընդգրկող կոթողային աշխատանքը, որի առաջին հատորը լույս տեսավ 1966 թ., իսկ վերջինը՝ 1991 թ.: Վերջին հատորի վերջին ձեռագրի նկարագրությունից հետո գործի ավարտման բերկրանքը ճաշակած բազմարդյուն հոգևորականը գրում է. «Փառք Քեզ Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի Տէր, փառք Քեզ»:

Նորայր արք. Պողարյանի հիշատակը վառ կմնա նրա բոլոր եղբայրակիցների, աշակերտների, հարազատների և հայ ու օտար հայագետների սրտերում: